



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՆՕԿՏԵՄԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 100

ԵՐԳ ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Տիրոջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհի:
Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ,
ցնծութեան երգերով եկէք անոր ներկայութեան:
Գիտցէք թէ Տերը ինքն է Աստուածը:
Ան մեզ ստեղծեց, եւ մենք անորն ենք.
Իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ ինք կ'արածէ:
Գոհաբանութեամբ մտէք անոր տաճարը,
օրհներգութեամբ մտէք անոր շրջափակէն ներս.
Հնորհակալութիւն յայտնեցէք իրեն,
օրհնաբանեցէք իր անունը:
Բարի է Տերը, անոր սերը յաւերժական է,
եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւատարմութիւնը:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղէրց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱԲԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

4:7-11

ՊԱՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀՆԵՐՈՒՄ ԲԱՐԻ ՏՆՏԵՄՆԵՐ (4:7-11)

Պետրոս Առաքեալ շարունակելով իր նիւթը եւ առաջին իսկ առիթով կը խօսի «ամէն բանի վախճանը մօտեցեր է»-ի մասին, եւ կը յիշեցնէ որ իւրաքանչիւր հաւատարմացեալ պէտք է ըստ այնմ ապրի իր կեանքը: Վախճան ըսելով, ակայն, երբեք չի նշանակեր ահ ու դող կամ սարսափ ապրիլ, այլ ընդհակառակը՝ պարբարաբ ըլլալու Տիրոջ գալուստի դիմաւորութեան: Որովհետեւ այդ է ու այդ պէտք է ըլլայ հաւատարմացեալ մարդուն սպասումն ու ակնկալութիւնը: Ամէն անգամ երբ Տէրունական աղօթքը կ'աղօթենք, կ'ըսեն. «Թող Քու արքայութիւնդ գայ»: Այդ արքայութեան գալուստին սպասումը պէտք է ունենայ հաւատարմացեալը: Անոր նախաճաշակը կ'ապրի ամէն Կիրակի երբ ներկայ կ'ըլլայ Ս. Պապարագի խորհուրդին: Այդ խորհուրդը ուրիշ բան չէ եթէ ոչ Քրիստոսի ներկայութիւն վայելելու, անով պարբարաբութիւն որ վերջնական հանգրուանին մէջ եւս այդ ներկայութիւնը ընդ միշտ ունենայ:

Պետրոս Առաքեալ անմիջապէս կ'անդրադառնայ աղօթքի նուիրուելու կարեւորութեան: Որովհետեւ եկեղեցի երբեք հաւատարմացեալ պիտի ապրի որպէս ամէն բանի աւարտը արդէն մօտեցեր է հասկացողութեամբ, ուրեմն նաեւ միշտ պէտք է պարբարաբ ըլլայ այդ ուղղութեամբ, առաւել եւս արթուն, անով աղօթքի նուիրուելու, որպէսզի աղօթքով կարենայ դէմ դնել բոլոր փոքրութիւններուն: Քրիստոս երբ Գեփթեմանէի պարսեղին մէջ կ'աղօթէր, յետոյ եկաւ եւ փեսաւ որ երեք աշակերտները կը քնանային: Պետրոսին ըսաւ. «Միմոն, կը քնանա՛ս, չկրցա՛ր ժամ մը արթուն մնալ: Արթուն մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Հոգին յօժար կրնայ ըլլալ, բայց մարմինը փակար է» (Մարկոս 14:37-38): Ահա Պետրոս Առաքեալ կեանքի փորձառութեան գնով կուգայ ցոյց տալու աղօթքին կարեւորութիւնը ու մանաւանդ՝ անոր դերը քրիստոնէայ հաւատարմացեալի կեանքին մէջ, երբ այդ հաւատարմացեալը ամենօրեայ դրութեամբ փորձութիւններու մէջ է կամ կրնայ ըլլալ: Այլ խօսքով, Պետրոս Առաքեալ ինչ որ սորվեցաւ Քրիստոսէն այդ է որ կը փոխանցէ իր հաւատարմացեալներուն: Քրիստոս պիտի ըսէր. «Միշտ աղօթեցէք: Արթուն եւ պարբարաբ եղէք ու աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք»: Ինչ որ եւ ձեզի սորվեցուցի դուք ալ նոյնը սորվեցուցէք»: Այս թելադրութիւններու լոյսին տակ Պետրոս Առաքեալ ինք եւս նոյնը կը թելադրէ իր այս նամակի ճամբով:

Շարունակելով իր միւրքը, Պետրոս Առաքեալ կ'ուզէ ցոյց տալ, թէ ինչպիսին է ու պէտք է ըլլայ քրիստոնէայ հաւատարմացեալին կեանքը, կամ ինչպէս պէտք է դրսեւորէ հաւատարմացեալը իր հաւատքը կեանքով: Անոր համար ալ Առաքեալը հետեւեալ գործնական քայլերը ցոյց կու տայ. սրբանց սէր ունենալու իրարու հանդէպ, որովհետեւ այդ սէրը, որ Աստուծմէ բխած սէրն է, որ իբրեւ շնորհք կը տրուի հաւատարմացեալին, պարճաւ կրնայ ըլլալ բազմաթիւ մեղքերու ներումին: Որովհետեւ Աստուծոյ Իր սիրովն էր որ ցոյց տուաւ մարդուն դրկելով Իր Միածին աշխարհը, որուն պարբարագումով պիտի շնորհէր մեղքերու քաւութիւն եւ թողութիւն: Նոյնպէս ալ երբ մենք այդ սէրն է որ կ'ապրինք ու կ'ապրեցնենք իրարու նկատմամբ, ահա այն արեւն Աստուծոյ ներկայութիւնն է որ կը ներգործէ մեր կեանքերուն մէջ, անով նաեւ մեղքերու ներում ստանալու:

Այդ սէրէն մղուած նաեւ կայ յաջորդ երեսը, որ հիւրասիրութիւնն է, որ փեղի կ'ունենայ առանց փոքրունջքի: Որովհետեւ հոն ուր սէր կայ հոն փոքրունջք չկայ ու չի կրնար ըլլալ: Ապա Պետրոս Առաքեալ կ'անդրադառնայ թէ իւրաքանչիւրը իբրեւ Աստուծոյ պարգեւներուն իրաւ փոխարէն՝ սրբացած շնորհները ուրիշներուն մարակարարելու պարտականութիւնը ունի, որպէսզի անով ոչ թէ անձը փառաւորուի, այլ՝ զԱստուծոյ, Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Այդ փառքին համար է որ այդ շնորհները կը տրուին մարդուն, որովհետեւ Աստուծոյ անով ցոյց կու տայ Իր գործերը: Որովհետեւ Աստուծոյ փառքը փեսնել, կը նշանակէ Աստուծոյ գործերուն ականատես վկան ըլլալ: Ինչպէս պիտի ըսէ Մաղմոսերգուն. «Երկինքն ու երկիրը Աստուծոյ փառքը կը պարմեն»: Ինչպէս պիտի ըսէր Քրիստոս ի ծնէ կոյրին բժշկութեամբ, որպէսզի անով Աստուծոյ փառքը փեսնէր: Նոյնպէս ալ բազմապատասխան շնորհները, պարգեւները որոնք կը տրուին իւրաքանչիւր հաւատարմացեալին ուրիշներուն մարակարարելու Աստուծոյ փառքին համար, որուն կը վայելէ փառք եւ գործութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն: